06.04. 1481

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
Համբարձում Մաթևոսյան

«01» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 037 - 26

Նախաձեռնողը՝ ***Քաղաքացի Համլետ Շահբեկյան***

Գործունեությունը՝ ***Մեծածախ առևտրի սրահի և առևտրահասարակական շինության կառուցում***
Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Արտաշատի խճուղի 49

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 037-26

«01» մայիսի 2026թ.

Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի 49 հասցեում մեծածախ առևտրի սրահի և առևտրահասարակական շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Համլետ Շահբեկյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք, Շենգավիթ վարչական շրջան

Ներածական մաս. Համլետ Շահբեկյանի կողմից նախատեսվում է Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի 49 հասցեում կառուցել մեծածախ առևտրի սրահ և առևտրահասարակական շինություն՝ վարձակալության հիմունքներով տրամադրելու նպատակով:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.685168 հա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8) կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության (այսուհետ՝ Շինության) հողամասը գտնվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի տարածքում: Հողամասը կառուցապատումից ազատ, անբարեկարգ, թեքությամբ ընդգծված հարթ ռելիեֆով տարածք է: Ռելիեֆի նիշերը տատանվում են 903,5–ից 905-ի սահմաններում: Նախատեսվող գործունեության տարածքից ամենամոտ բնակելի տունը գտնվում է 54.42 մ հեռավորության վրա, հարևանությանբ 59.80 մ հեռավորության վրա գտնվում է պանրի գործարանը, Մ 2 միջպետական ճանապարհը՝ 38.5 մ և գործող քաղաքային գերեզմանոցը 66.9 մ հեռավորության վրա: Տարածքը ծառազուրկ է, բացակայում են բնության և պատմամշակութային հուշարձանները, ջրային ռեսուրսները, Կարմիր գրքերում գրանցված բույսերը և կենդանիները:

Հիդրոերկրաբանական տեսակետից հայցվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են խորը հորիզոններում: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

ЗАКЛЮЧЕНИЕ
COMMISSION
OF EXPERTS

Շինությա կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողի ընդհանուր մակերես՝ 6851,68 մ²,
- կառուցապատման մակերես՝ 3676,72մ² (80 %),
- կանաչապատման մակերես՝ 1374,89 մ (20 %):
- անջրանցիկ մակերես՝ 1631.30 մ²:

Նախատեսվող գործունեությունն իրար կպած, 2 մասնաշենքից բաղկացած շինություն է: Առաջին մասնաշենքը՝ երկհարկանի առևտրահասարակական շինություն է, երկրորդը՝ մեկհարկանի մեծածախ առևտրի սրահ: Առևտրահասարակական շինության առաջին հարկը հասարակական նշանակության է, երկրորդը՝ մեծածախ առևտրի: Առաջին մասնաշենքը ունի նաև ստորգետնյա՝ նկուղային և վերգետնյա՝ տեխնիկական հարկեր: Նկուղային հարկում նախատեսվում է տեղադրել պոմպակայան՝ ջրամատակարարման և հրդեհամարման նպատակով: 24 ժամյա ջրօգտագործումն ապահովվելու համար պոմպը միացվելու է ջրի ռեզերվուարին՝ համաձայն ՀՀՇՆ II-8.04.02.-2005 նորմի:

Շինությունների տանիքը հարթ է, կազմակերպված ջրահեռացումով, ինչի շնորհիվ անձրևի և հալոցքի ջրերը կհեռանան բակային ցանց՝ միանալով անձրևատար կոյուղու հեղեղատարին: Առևտրահասարարական շինության դիմաց նախատեսվում է ավտոկայանատեղի՝ 41 մեքենայի համար, իսկ մեծածախ առևտրի սրահի դիմաց՝ աշխատանքային բակ՝ բեռնատար մեքենաների բարձման և բեռնաթափման համար:

Համաձայն նախագծի շինության ֆունկցիոնալ նշանակությունը վերաբերում է բացառապես ոչ պարենային ապրանքների, մասնավորապես՝ մանրահատակի, լամինատի և հատակային այլ ապրանքների մեծածախ վաճառքի: Նախագծով արագ սննդի կետերի, սրճարանի կամ թեյարանի կազմակերպում նախատեսված չէ, ինչը կկանխի խոհանոցային արտադրական գործընթացների, հոտերի կամ լրացուցիչ կենցաղային թափոնների առաջացումը:

Շինարարական աշխատանքները տևելու են 36 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Շինարարական տեխնիկայի կայանման համար նախատեսված տարածքում տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ, շինհրապարակի ելքային մասում նախատեսվում է մեքենաների անիվների լվացման 2 հարթակ: Շինարարության ընթացքում աշխատողների հանգստի, սննդի և հիգիենայի կազմակերպման համար նախատեսվում է շարժական տնակ: Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի շինարարական նյութեր: Շինարարական բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Բնառեսուրսներից ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի և աշխատողների կոմունալ կենցաղային կարիքների համար: Տեխնիկական ջուրը կմատակարարվի ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով: Խմելու ջուրը կմատակարարվի գոյություն ունեցող ջրագծից, ջրի սպառումը կլինի ընդամենը 2.758մ³/օր:

Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը բակային սելավաջրերի հեռացման համակարգի միջոցով կհեռացվեն դեպի տարածքում տեղադրվող համապատասխան տարողությամբ պարզարան: Տարածքում նախատեսված է նաև

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

պարզարան՝ բետոնախառնիչ և բետոնամղիչ մեքենաների լվացման արդյունքում առաջացող բետոնաջրերի հավաքման նպատակով: Պարզարանների պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր 2 մ բարձրության ցանկապատով, նախատեսված է բետոնի ընդունման հարթակ, բացօթյա պահեստ: Շինարարության և շահագործման փուլերում տարածքն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, տեղակայվելու է պահակատուն, ապահովված են լինելու հակահրդեհային ինվենտարով, պահեստային շինություններն ապահովված են լինելու օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով, պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար:

Շահագործման ընթացքում ջրամատակարարումը և ջրահեռացունը կիրականացվի միանալով գոյություն ունեցող ցանցերին՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ -ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Էլեկտրամատակարարումը կիրականացվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանների համաձայն, ինչի նպատակով նախաձեռնողը 2025թ. դեկտեմբերի 12-ին գրությամբ դիմել է ենթակառուցվածքը տնօրինող կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ, որի արդյունքում առաջացած հողային զանգվածն ամբողջությամբ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված վայր: Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ նախատեսվում է տարածքում առկա բուսահողի շերտի (մոտ 30–40 սմ) առանձնացում և ժամանակավոր պահեստավորում՝ շինհրապարակի սահմաններում առանձնացված հատվածում: Պահեստավորված բուսահողը կպահպանվի խոնավացման և մեխանիկական խտացումից պաշտպանված պայմաններում: Բուսահողի մի մասը կօգտագործվի տարածքի կանաչապատման աշխատանքների ընթացքում, իսկ ավելացած բուսահողը կօգտագործվի Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված կանաչապատման կամ բարեկարգման ենթակա տարածքներում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներից սև և գունավոր մետաղները կհավաքվեն և կհանձնվեն մասնագիտացված կազմակերպությունների՝ պայմանագրային հիմունքներով, իսկ շինաղբը, բետոնի մնացորդները, պարկերը և այլն, կհավաքվեն աղբամաններում և կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են աղբամաններ, աղբահեռացումը կատարվելու է ըստ անհրաժեշտության՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատումն իրականացվելու է՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված մոնիթորինգ.

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

➢ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական՝ 24 ժամյա չափումներ (համայնքի կողմից տրամադրված նմուշառիչների միջոցով),

➢ փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում ըստ անհրաժեշտության,

➢ օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

➢ աղմուկի և թրթռումների թույլատրելի մակարդակների պահպանում,

➢ կառուցապատման տարածքի և հարևան տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ,

➢տրանսպորտային միջոցների սպասարկում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Պատճառաբանական մաս. Երևանի Շենգավիթ վարչական շրջանում նախատեսվող մեծածախ առևտրի սրահի և առևտրահասարակական շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Շենգավիթի վարչական շրջանը: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակումներում:

Նախագծով ապահովված է Երևանի քաղաքապետարանի կողմից պահանջվող 20% կանաչապատման մակերեսը և հանրային երկրորդ լսման ընթացքում առաջարկվեց կանաչապատման նախագիծը ներկայացնել համաձայնեցման: Բացի այդ, մեկ անգամ ևս քննարկվեց Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը նախատեսվող գործունեության սանիտարապաշտպանական գոտու՝ 50 մ պահպանման և 66.9 մ հեռավորության վրա գտնվող գերեզմանոցի վերաբերյալ: Նախագծով ներկայացված հեռավորությունը համապատասխանում է Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910 որոշման կետ 7-ի «բ» ենթակետով սահմանված պահանջներին:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու է ժամանակավոր բնույթ: Քանի որ շահագործման փուլում չի ենթադրվում արտադրական կամ վերամշակման գործընթացներ, շրջակա միջավայրի վրա էական բացասական ազդեցություններ շինարարության և շահագործման փուլերում գնահատվում է որպես ցածր ռիսկ պարունակող գործունեության տեսակ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի ապահովման նպատակով:

- Շինարարական հրապարակի կազմակերպման, շինարարական հրապարակներում փոշու արտանետումները վերահսկելու նպատակով օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրման և փոշենստեցման միջոցառումներն անհրաժեշտ է

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

իրականացնել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405 որոշման և քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանի պահանջներին համապատասխան, ինչպես նաև պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբի և թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Կանաչապատման նախագիծը ներկայացնել Երևանի քաղաքապետարան՝ համաձայնեցման՝ ապահովել ՇՄԱԳ-ով նախատեսված կանաչապատման աշխատանքների իրականացումը, կանաչապատման մակերեսը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Համլետ Շահբեկյանի կողմից Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի 49 հասցեում նախատեսվող մեծածախ առևտրի սրահի և առևտրահասարակական շինության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան